01/10.5/4926-09

2009-07-24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Սամվել Բալասանյանի և Հակոբ Հակոբյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $31^2$-րդ հոդվածով սահմանված մոտեցումը պայմանավորված է եղել 2008 և 2009 թվականների անցումային ժամանակաշրջանում փաստաթղթաշրջանառության հետ կապված որոշ խնդիրների առկայությամբ և նպատակ է հետապնդել բացառել կատարված օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած, ինչպես նաև 2009 թվականի ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվող անհատ ձեռնարկատերերի համար բարձր հարկային բեռի առաջացման հնարավորությունը: Ինչ վերաբերում է նշված մոտեցումն առանց ժամանակային սահմանափակման կիրառելուն, ապա դա համարում ենք ոչ տրամաբանական, քանի որ եկամտահարկը ֆինանսական արդյունքների (տվյալ դեպքում՝ հարկվող եկամտի) հիման վրա հաշվարկվող հարկատեսակ է, իսկ

առաջարկվող նախագծի ընդունման դեպքում գործնականում խզվում է հարկվող եկամտի և եկամտահարկի միջև եղած ուղղակի կապը։

Հայտնում ենք նաև, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի քննարկմանն են ներկայացվել օրենսդրական նախագծեր, որոնց ընդունմամբ գործնականում կլուծվի մատակարարներին վճարված գումարներն առանց հիմնավորող փաստաթղթերի եկամտահարկի իմաստով որպես ծախս ընդունելու խնդիրը։ Վերջինս նշանակում է, որ նախագծի ընդունման դեպքում օրենքով սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվող անհատ ձեռնարկատերերը ստիպված կլինեն վճարել եկամտահարկի նվազագույն գումար՝ համախառն եկամտի 2 տոկոսի չափով՝ կորցնելով եկամտահարկով հարկման նպատակով որոշ նվազեցումներ կատարելու հնարավորությունը, մինչդեռ ծախսերը հիմնավորելու հետ կապված խնդիրների լուծման դեպքում նշված խմբի անհատ ձեռնարկատերերի հարկվող եկամտի հիման վրա հաշվարկվող եկամտահարկը կարող է ավելի փոքր լինել։ Հետևաբար, օրենքով սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարող չհամարվող անհատ ձեռնարկատերերը կարող են հայտնվել հարկման իմաստով ավելի ծանր պայմաններում, քան օրենքով սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարող համարվող անհատ ձեռնարկատերերը։ Այդ առումով նախագիծը հակադրվում է նաև դրա ընդունման վերաբերյալ հիմնավորմանը, համաձայն որի նախագծի ընդունումը կողմնորոշված է փոքր և միջին ձեռնարկատերերի գործունեության աջակցությանն ու նրանց համար գործունեության կանխատեսելի միջավայրի ձևավորմանը։

Բացի դրանից, նախագծի ընդունման դեպքում կստացվի, որ կատարված օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած բոլոր անհատ ձեռնարկատերերի համար (անկախ նրանց կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության մասշտաբներից) վճարման ենթակա եկամտահարկի գումարը չպետք է ավելի լինի համախառն եկամտի 10 տոկոսից,

ինչը համարում ենք ոչ տրամաբանական, քանի որ կատարված օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած և հետագայում ձեռնարկատիրական գործունեության մասշտաբներն ընդլայնած անհատ ձեռնարկատերերի համար, օրինակ, նման մոտեցման սահմանումը որևէ տնտեսական հիմնավորում ունենալ չի կարող։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը։

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-647-19.06.2009-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

**«Եկամտահարկի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

***Հոդված 1.*** «Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31.2 հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝

«Հոդված 31.2. Առանձին հարկ վճարողների եկամտահարկը

Օրենսդրական փոփոխությունների հետևանքով պարզեցված հարկից հարկման ընդհանուր կարգին անցած անհատ ձեռնարկատերերի համար սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ վճարման ենթակա եկամտահարկը, ինչպես նաև ամբողջ տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ԱԱՀ վճարող չհամարված անհատ ձեռնարկատերերի համար սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ վճարման ենթակա եկամտահարկը չեն կարող պակաս լինել այդ տարիների համար հաշվարկված համախառն եկամտի 2 տոկոսից և ավել՝ համախառն եկամտի 10 տոկոսից։ Սույն հոդվածին համապատասխան վճարված գումարները համարվում են այդ տարիների համար եկամտահարկի վերջնական գումարներ։»։

***Հոդված 2.*** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում 2010 թվականի հունվարի 1-ից։

**Հիմնավորում**

**«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի անհրաժեշտության մասին**

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 31.2 հոդվածում նշված դրույթների կիրառումը նաև հնարավորություն է տալիս արագ գնահատել բյուջե վճարման ենթակա հարկերի առավելագույն գումարը, որպես պայմանագրով նախատեսված գումարի 13 տոկոս /եկամտահարկ՝ 10 տոկոս, սոցապ վճար՝ 3 տոկոս/, ինչը իր հերթին ստեղծում է ձեռնարկատիրական գործունեություն իրականացման համար կանխատեսելի միջավայր և հանդիսանում է լուրջ աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության համար։

Այսինքն առաջարկվում է Հոդված 31.2.-ի կիրառումը դարձնել անժամկետ։